

# ՄԱՏԵՆԱԽՈՍՈՎԱՆ

Յովակիմ Սոլօվեան, Մեռած ծովում, — զէպ երեք  
ամսից բազկացած. Մոսկով, 1902. գինն է 1 ըուրի:

Մի նոր փեսաստն ուրեմն՝ մոածեցինք այս բաւական  
ասուար զիբքը ձեռք տռնելիս, հետաքրքրութցանք մինչև ծայր  
կարգալու: Արժէ կարգալ և տեսնել, թէ ինչ աստիճանի է  
հասնում գրական աշպարիզի վերայ երեալու տենչով բռնուած  
չալ մարդու յանդգնութիւնը և ինչպէս զիւրին է նրա  
համար ոտքի տակ տալ ու անարգել այդ ասպարեզը: Առանց  
ընկու իմանալու, բառաբանով կառարած թարգմանութիւններ  
շատ էինք տեսնել բայց բառաբանով վրապասան...  
Հեղինակն, ինչպէս երեւում է, բնիկ ասարախանցի է և մայ-  
քենի բարբառը սովորած լինելով՝ կարծում է, թէ հայերէն  
զիտ: • Կիբյանեմ, առում է, մեր քարաքի վաճառականա-  
կան բարքերը կնկարագրեմ: մէջը կդնեմ սիրահարութիւն  
— դժուարութիւններով պսակի հասած, զժրախտութիւններ,  
բախտաւոր լուծումն, — յիմացած բաւեր էլ բառարանում  
կնայեմ, դուրս կգոյ մի զեղեցիկ վեպ: Արագըներում յայ-  
տարարութիւն կկարգան — «Մեռած ծովում»: Խորհրդաւոր  
վերնադիր: Հեղինակի անունն էլ այնպէս բանաստեղծական —  
«Սոլօվեան»: Ինչու պէտք է մի բուրյին խնայեն ու չգնեն: —  
«Ահա կահչեց անբնակալ կկուն, կլլլաց լորին» (հարկաւ ոչ  
լորի ծառը, այլ լոր թռչունը), չորս կողմը «ի տախտկալի  
միակերպ անդորրութիւն», և մեկը ձեզ շետ շոգենաւ նըս-  
տած Ասարախտան ենք գնում: «Նոդենաւն արդէն անցել էր  
Սարսովը՝ վողդայի վրա համարված այդ մայրահայքը,  
և մատենում էր Յորիցինին: Պես Յարիցինի նըոյն ան-  
դամ չկար, բայց այսաեղ իշնող պոսածիրներն արդէն ան-  
համբերութեամբ սպասում էին այդ բաղադին» — «ամեն  
մարդ քաշվեր էր իր կայիւրները և յոդնած հայացքով

ու անհամբերութեամբ սպասում էր երեկոյին։ Գայիս են ուրիշ պասաժիրներ. «Նրանք ուղեորվեցին առաջին կարգը», և հոյրը հրամայում է որդուն. «Ազեքսանդր, կառավարիր, որ բարգութուզը տեղը դնեն» (իմա—կարգադրի՛ր, որ իրեւը ըստ տեղաւորեն)։ Հեղինակը նկարագրում է եկուորներին, այդ Մայիսեանն է, որ «իր ոսկորները դուրս է բերել հիւսիսային Կովկասի քաղաքներից» և «Իր շաբարային և կարութեան պատճառում» Մոսկվա էր դնացել՝ «պրօֆեսորների նետ իր տիարութեան մասին խորհրդակցութիւն անելու»։ Նա նկարագրում է, մինչև անգամ «շոգենաւի կիրք զարդարանքը», նորա գահինդի մէջ տեղում բացված մեծ սեղանը, որ ծանրաբեռնված ծաղկամանների և նաև վայ սարեւի տակ։ Նկարագրում է երիտասարդների, որոնք «առեւտրից փախչում են, ինչպէս թուքը խոզան մոից» և նոցանից մէկը թէղէտ շատ բան դիմէ, «բայց ի՞նչ անես, որ շատ ծիծաղելի և մասխարայի առարկայ է բոլոր այդ իմացածում։ Սա մի կատարեալ սագ է, որ պարձենում է իր չնորքում։ Խոկ երբ Աստրախան ենք համառում, նա հարկաւոր է համարում մանրամասն նկարագրել նաև այդ քաղաքը իր «անշարժ նեղ փողոցներով։ Որ «զիխաւորապէս ընչում է ձուկով» այն ամբողջ ծանսապարհը, որով անցնում են իր հերոսները և որ ներկայացնում էր մի հսկայ՝ երկաթի ստամբուով։ Որ կարողանում է մարսել իր մէջ առեւտրական բազմատեսակ ձիւղեր։ Այսպիսի հրաշալի բանասաւեղծական նկարագրութեանց, խոր հոգեբանական և փիլիսոփայական խորհրդածութեանց, մանաւանդ թէ հայկական լեզուի նահատակութեան դոհարներ անբաւ են այս դրբել մէջ։ Նրա գլխաւոր հերոսներից մէկը, երիտասարդ էր՝ բացեց բախկալի խանութե և գարձաւ բախկալչի։ Երբ այդ հերոսները մի անգամ են ժողովում, տիրում է «մի զգալի կենացնութիւն», մի ուրիշը նոցանից, վերսոյիշեալ Մայիսեանն ասում է իւր աղջկան. «Տեսար ի՞նչ լիրը մարդ է քո աները» (իմա սկեսայրը)։ Կարծեմ բաւական է։ Հնա՞ր չկայ արդեօք մեր լեզուն ու մեր զբականութիւնն ազատելու այս տեսակ անօրէն բանարարութիւններից։

Ժողովրդական առակենքը, — Ա. Մոլլա Նասր — էղ — զին  
— Բ. Հորոս. — Հաւաքեց ե.  
Լալոյեան, Թիֆլիս, 1903.

Աղջակարական Հանգիսի խմբագիրը, պ. Յ. Լալոյ  
յեան, սկսել է սորանով «Ճոր, առակների» մի շարք և  
նպատակ դրել «Հաւաքել հայ ժողովրդի մէջ պատմուած  
բազմաթիւ առակները, և ապա մի ուսումնասիրութիւն  
կատարել, ցոյց տալով օրանց ծագումը զարդացումը, ար-  
տայարած փիլիսոփայութիւնն և բարոյական սկզբունք-  
ները, ժողովրդական ծաղրի ոյժը ևնու։ — Գեղեցիկ զործ  
ի հարկի, բայց ներկայ որակները, որոնցից առաջինն  
ուժ անդամ աւելի ստուար է երկրորդից (246 և 31  
եր.), չեն արդարացնում դժբաղդաբար այսպիսի մի  
ժողովածուի նկատմամբ զրուելիք մի շարք տարբական պա-  
հանջներ։ Ժողովողն ինքը նկատում է, որ Մոլլա-Նասրէդ-  
զինի անուան ներքոյ մաել են բազմաթիւ ուիշների՝ զուտ  
հայարիւն մարդոց առակները. բայց մինչդեռ նա կենսազրա-  
կան տեղեկութիւններ խսկ հազարդում է այդ ամենայանի  
առակաշանի մասին և կամենում ուրիմն պատմական անձ  
զարհնել սորանն դնում է այնուամենայնիւ սորա անուան ներ-  
քոյ այնպիսի առակներ, որոնց չետ նորա անձի առնչութիւն  
չունենալն անհներե է, այսպիսով Մոլլան ներկայանում է ոչ  
միայն «և» իր յիշոր և իր խելացին, այլ և իր որսորդ,  
իր կախազան հանուած յանցաւոր, իր ամեն տեսակ պաշ-  
տօններ ու ծառայւթիւններ կատարած մէկը. Ապա, բոլո-  
րովին անտեղի կերպով կրինուում է մի և նոյն առակը՝ նորա  
համար միայն, որ մի քանի բառերի տարրերութիւն կայ եր-  
կու պատմուածքի մէջ, այն մասի մէջ, որ մոլլան իրեւ խե-  
լօր պիտի ներկայանար, ախմարի առակներ կան և ընդհակա-  
ռակին։ Բայց ամենից զդային լեզուի անհարթութիւններն են:  
Ցայտանի և, թէ որչորդի կորցնում է, առակաւոր իօսրն իւր  
արքիքը անշնորհք պատմողի բերանում. պակաս մեծ չէ  
անշուշտ կորուսն անշնորհք զրշի առկ. խսկ այս առակ-  
ներից շատերն անշնորհք ձեռքով են զրի առնուել և խըմ

բագրողը փոյթ չի ունեցել հարկաւոր չտիրով հարթե ու; Մի քանիսը զըեթէ անհասկանալի են զարձել, մի քանիսն էլ տպագրելի լինելու համար այնպիսի խեղութերի ենթարկուել, որ համը կորել է: Տպագրութիւնն ևս հարկաւոր ինամբով չէ կատարուած: Նատերը կարող են այսպիսի ժողովածուներ կաշմէք բայց ոչ հրատարակութիւն է յանձնանում՝ պէտք է աշխատանք դործ զնէ, քննէ, զտէ, կարեորը միայն տոյ:

Des Wardapet Eznik von Kolb. Wider die Sekten. Aus dem Armenischen übersetzt und mit Einleitung, Inhalts—Übersichten und Anmerkungen versehen von Ioh. Michael Schmid

Wien 1900 Druck und Verlag der Mechitharisten—Congregation.

(Եղնիկ Կողբացի, Ընդգէմ Աղանգոց. Հայերէնից թարգմանեց Խ. Մ. Շմիդ. Վ.Եննա, Մխիթարեան տպարան):

Հայկական մատենագրութեան՝ Եւրոպական լեզուներով կատարուած թարգմանութիւնների մէջ վազուց ի վեր խիստ զգալի էր մանաւանդ մեր ոսկեզէն դարու ամենափայլուն ներկայացուցիչներից մէկի՝ Եղնիկ Կողբացու երկի մի գոհացուցիչ թարգմանութեան պակասութիւնը՝ Ճշմարիտ է, 1853 արդէն Ֆլորիվալ Փրանսերէնի էր թարգմանել Եղնիկի երկասիրութիւնը<sup>1</sup>, սակայն այդ թարգմանութիւնը միանգամայն զուրկ է հարազատ և գործածական լինելուց, —ինչպէս վկայում են այդ բոլոր հայագէտները միաբերան։ Բայցի այս անհարազատ թարգմանութիւնից մինչև ներկայ թարգմանութիւնը կային Եղնիկի որոշ հատուածների թարգմանութիւններն միայն եւ այն հանգամանքը, որ, չնայելով Եղնիկի հարազատ թարգմա-

1, Réfutation des différentes Sectes. Paris, 1853.

նութեան պակասութեանը, Եւրոպացի գիտնականները վաղուց արդէն գնահատել են Եղնիկի երկը և ուսումնասիրութեանց նիւթ գարձրել այն, — յիշենք այստեղ Նոյման (Neumann), Վինդիշման, Հառնակ, Ֆետեր, Դիւլօրիէ, Լանդլուայ գիտնականների անունները, — այդ հանգամանքը արդէն ցոյց է տալիս, թէ որքան արժէքաւոր է Եղնիկի երկը գիտութեան, յատկապէս կրօնների գիտութեան տեսակէտից։ Եւ այդ չքնաղ երկի գերմաններէն լիակատար և, այս դիմից շեշտեմ գոհութեամբ, հարազատ ու խնամքով կատարուած թարգմանութիւնը դրուած է այժմ Եւրոպացի գիտնականների առաջ Եղնիկի թարգմանիչ Շմիդի անունն անծանօթ չէ մեր մատենագրութեամբ զբաղուողներին։ Նա վաղուց է սկսել իւր թարգմանական գործունէութիւնը. 1871-ին արդէն թարգմանել է նա Յովհան Մանդակունու ճառերը, 1872-ին՝ Յանձախապատումը. վերջերս թարգմաննեց նա նաև Սանդուխտի վկայաբանութիւնը (Հանդէս Հայագիտութեան, հ. I):

Այս թարգմանութեան հրատարակութիւնն ուրախացուցիչ է և մոնաւանդ այն պատճառով, որ նա սկիզբ է և առաջին հասորը Վեննայի Մխիթարեանների հետեւալ ձեռնարկութեան՝ «Մատենադարան Հայկական հին մատենագրութեան» գերմանական թարգմանութեամբ։

Եղնիկի թարգմանութեան սկզբին կցել է Շմիդ երկի իւրաքանչյուր գրքի բովանդակութիւնն առանձին գլուխներով (Եր. V—X), ապա պատմական—մատենագրական մի սիրուն ներածութիւն (Եր. 1—18). Գրքի 19—205 եւրեսները ամփոփում են տեքստը, ճոխացրած բազմաթիւ կարևոր մատենագրական, լեզուական և պատմական ծանօթութիւններով։ Բացի այս ծանօթութիւններից գրքի լուսանցքներում նշանակուած են Եղնիկի մէջ առաջ ըերած ու Գրոց վկայութիւնների համապատասխան գլուխներն ու համարները։ Եւ այս վերջնիս ընդհանուր լիակատար (2—3 պակասութեամբ) ցանկն էլ դետեղած է գրքի վերջում (Եր. 204—209):

Եղնիկի թարգմանութեանը ձեռնարկել է Շմիդ Վենչայի յայտնի Մխիթարեան վարդապետ հ. Գր. Գալէմաքարեանի յորդորով, և սրա ու հ. Ա. Պարոնչի խորհրդին և օգնութեանը դիմելով մանաւանդ դժուարիմաստ հաւատուածները թարգմանելու համար։ Եւ այսպիսով թարգմանութիւնը կատարուել է, ինչպէս ինը Շմիդ ծանօթացնում է ընդհանուր աշխանքով։ Թարգմանութիւնը ջանացուել է կատարել ըստ կարելոյն բառացի, տեքստի հարազատութիւնը պահպանած լինելու դիտումով։

Շմիդի թարգմանութեան համար իրեւ հիմք ծառայել է և ոչ մէկը մինչեւ այժմ Եղնիկի եղած հրատարակութիւններից, այլ Հ. Գալէմքարեանի պատրաստած և մօտիկ ապագայում լոյս ընծայելի (ինչպէս տեղեկանում ենք այդ թարգմանութեան ներածութեան համար պատրաստած ձեռագրից։ Ներքեւ ծանօթութիւնների մէջ գրել է թարգմանիչը լոյս տեսած հրատարակութեան տարբեր ընթերցումները։

Եղնիկի գիրքը մինչեւ այժմ ունեցել է հետեւեալ հրատարակութիւնները. — 1) Զմիւռնիա, 1762 թ., 2) Վենետիկ, 1826 թ., 3) Վենետիկ. (հրատարակութեան թիւը գրքի վրայ նշանակում է 1826, մինչ այն, ըստ հ. Գալ.-ի կատարուել է 1850-ին), 4) Պարիզ, 1860, 5) Վենետիկ (գարձեալ գրքի վրայ նշանակած է 1826 թ., իսկ մինչ այդ լոյս է տեսել ըստ հ. Գալ.-ի 1863-ին). 6) Կ. Պոլիս, 1864. 7) Կ. Պոլիս, 1869. 8) Կ. Պոլիս, 1871. 9) Կ. Պոլիս, 1879. Տասներորդ, քննական, հրատարակութիւնը պիտի լոյս տեսնէ հ. Գալէմքարեանի աշխատութեամբ։ Սակայն հենց այստեղ հարց է ծագում, թէ ինչ գրչագիր կամ գրչագիրներ են իրեւ հիմք ծառայել այս հրատարակութիւնների։

Եղնիկի առաջին՝ Զմիւռնիայի հրատարակութեան մէջ, որ կատարուել է Կ. Պոլսի ժամանակի յոյտնի Յակոբ պատրիարքի ձեռքով, յիշատակուած է հետեւեալը։ Զմիւռնիայի արքեպիսկոպոս Աքրոնամ տեղեկացնում է պատրիարքին, որ Եղնիկ վարդապետի անունով մի երկ է գտնուում իր մօտ. պատրիարքն էլ անմիջապէս տպագր-

րութեան է յանձնում այն, թէ ինչ եղաւ այդ հրատա-  
րակութեան հիմք ծառայող գրչագիրը, այդ մասին մինչեւ  
վերջերս ոչ մի գրաւոր տեղեկութիւն չը կար: Կարծւում  
էր, որ 1845-ին Զմիւռնիայի հրդեհի միջոցին այրուած  
պիտի լիներ այն Վենետիկցիք իրենց Եղնիկի հրատարա-  
կութեանց առաջաբանում ասում են «Օրինակ տպագրիս  
ձեռագրեալ է ի թուիս Հայոց Չիթ» (1280): Այս խօսքե-  
րին նայելով պէտք էր ընդունել, ինչպէս ասում է Հ. Գա-  
լէմբիարեան, որ վենետիկցիք Եղնիկի մի գրչագիր ունեն  
1280 թուից. «Վենետիկի Միիթարեանք այս մասին մին-  
չև այժմ ել ոչինչ չեն ասել պարզօրէն, չնայելով որ գրա-  
համար առիթ է հերկայացել»: Հ. Գալէմբարեան, նպա-  
տակագրած լինելով Եղնիկի քննական հրատարակութիւնը  
լոյս ընծայել 1897-ին գնում է Վենետիկ այնուղ իրը  
գտնուող Եղնիկի գրչագիրն ուսումնասիրելու: Եւ, ով զար-  
մանք, վենետիկցոց ունեցած գրչագիրը ոչ այլ ինչ է լի-  
նում, եթէ ոչ Զմիւռնիայի (առաջին) հրատարակութիւնը,  
միայն թէ մի գրչագրի հետ արուած համեմատութիւնով  
և այլն՝ Այսուղ, ինչպէս երկում է, «մութ կէտ մը կայ»:  
Վերջապէս իրողութիւնն այն է, ինչպէս տեսնում ենք, որ  
վենետիկցիք չունեն Եղնիկի և ոչ մի գրչագիր: Ուրեմն  
գոյութիւն է ունեցել Եղնիկի ընդամենը մէկ գրչագիր:  
Թէկուղ առանձին հատուածներ կամ մտսել Եղնիկի՝ չը  
կան: Եւ այդ միակ գրչագիրը, կարծւում էր, այրուել է:  
Սակայն անցեալ տարի այս ժամանակ, ուրեմն Եղնի-  
կի գերմաներէն հրատարակութիւնից յետոյ, ոչտեղ և առ-  
ող են բերուած Հ. Գալէմբարեանի վերոյիշեալ խօսքե-  
րը, Եղնիկի գրչագրի նորից լոյս աշխարհ գալու մասին  
մի լուր կարդացիւ: «Հանդէս Աճառեայ»-ի անցեալ տա-  
րուայ յունիսի համարի ծաղկէփունջի բաժնում տպա-  
գրուած տեսանք պ, Հ. Աճառեանի՝ առ Հ.Յ. Տաշեան ուզ-  
գած մի նամակի հետեւեալ կտորը: «Ուրախութիւն ունիմ  
աւետելու Չեղ և Հ. Գալէմբարեանին, թէ Եղնիկի միակ

ձեռագիրը, որ այրած էր Զմիւռնիոյ նրդենին մէջ» դըտ-  
նուեցաւ Ս. էջմիածնի ձեռագրատան մէջ, եշ. ապրիլ  
25: Եւ թէ Աճառեան և Գալուստ Տէր-Մկրտչեան ոկսել  
են համեմատել տպագրի հետ նաև՝ քննութեանց և հա-  
մեմատութեանց հետեանքն շուտով լոյս կտեսնէ տպա-  
գրութեամբ: Բացի այս երկտողից գտնուած գրչագրի մա-  
սին մենք ոչ մի ուրիշ տեղեկութիւն չկարդացինք: «Արա-  
բատն էլ ոչինչ չգրեց այդ մասին, և ոչ էլ աղ. Աճառեանի  
խոստացած «շուտով» լոյս տեսնելիք քննական հետազօ-  
տութիւնների մասին մի բան խմացանք: Եւ երիի հ. Գա-  
լէմքարեանն էլ իր դեռ 1900-ին խոստացած «շուտով»  
լոյս ընծայելիք հրատարակութիւնը յետաձգել է Եղնիկի  
գրչագրի լոյս աշխարհ գալու պատճառով:

Սպասնելք յուսով, որ Ս. էջմիածնի տպարանի մամուլ-  
յի տակից լոյս ընծայուի հիմքով մի քննական հրատարա-  
կութիւն:

Դառնանք նորից Շմիդի թարգմանութեան մտուն մի  
քանի խօսք ասելու: Գրքի վերնագիրը դրել է Շմիդ „Wi-  
der die Sekten“, հետեւլով հ. Գալէմքարեանին, որն իր  
հրատարակութեան համար յարմար է դատել «ընդդէմ  
աղանդոց» վերնագիրը: Գրչագիրն ինքը ոչ մի վերնագիր  
չունի: Զմիւռնիայի հրատարակութիւնն ունի «Գիլք ընդ-  
դէմութեանց» վերնագիրը, իսկ Վենետիկի հրատարակու-  
թիւնները՝ «Եղծ աղանդոց»:

Շմիդ իր ներածութեան մէջ խօսում է նաև Եղնիկի  
երկի մի հարազատ թարգմանութեան անհրաժեշտութեան  
մասին, տպա ուրուագծում է Եղնիկի գրաւած տեղը մեր  
ուկեղէն դարի մատենագրների շարքում: Նա առաջ է  
բերում եւրոպացի մի քանի նշանաւոր հայագէտների կար-  
ծիքը Եղնիկի աշխատասիրութեան վրայ, տալիս է Եղնիկի  
անձի մասին մեր մատենագրութեան մէջ պահուած կեն-  
սագրական համառօտ տեղեկութիւնները: Շարունակու-  
թեան մէջ ծանօթացնում է նա ընթերցողներին եւրո-  
պացի և հայ գիտնականների ուսումնասիրութեանց եղրա-  
կացութիւնները Եղնիկի երկի վերաբերմամբ, որոնք ման-

բաքննին ցոյց են տուել Եղնիկի գործ գրած այլեպէլ աղքիւրները, — որոնք են Արհամիդէս, Հիսկալին, Մեթու գիոս և Բարսեղ: Աւրիշ ասորական աղքիւր էլ ցոյց տուեց Ա, Կարրիէր: Ինչ Եղնիկի գրութեան ժամանակն է վերաբերում, Շմիդ համաձայնում է պլոֆ. Ա. Վէրէրի այն կարծիքին, թէ 441 թուին, բայց աւելի ճիշտ՝ 345—448 թուերի ժամանակամիջոցում պիտի գրուած լինի Եղնիկի գիրը<sup>1</sup>: Ազա մատնացոյց է անում թարգմանիչը Եղնիկի գրութեան գրդապատճառների վերայ, տալիս է ամբողջ դրքի համառօտագոյն բովանդակութիւնը: Վերջում էլ խօսում է Եղնիկի հրատարակութիւնների ու իր թարգմանութեան ձեռնարկութեան մասին:

Բացի այս ներածութիւնից, ինչպէս յիշեցի, գրքի կարևորագոյն արժանիքներից մէկն էլ այն բազմաթիւ ծանօթութիւններն են, որոնք միանգամայն ըմբռնելի և դիւրամատչելի են դարձնում Եղնիկի գործը: Բուն թարգմանութեանը գալում պիտի ուրախութեամբ արձանագրենք այստեղ, որ միանգամայն յաջող կարելի է անուանել այն: Մենք համեմատեցինք մի քանի տեղեր հայերէնի հետ և թարգմանութիւնը հարազատ գտանք: Եւրոպական դիտական—մատենագրական հանդէսներն էլ ուրախութեամբ ողջունեցին այս թարգմանութեան հրատարակութիւնը: Բոլորն էլ շեշտում են թարգմանութեան յաջող և հրազատ լինելը: Մի քանի չնչին թերութիւնները ոչնչով չեն պակսեցնում գրքի արժանիքները:

Հետեւեալ քննադատութիւնները լոյս տեսան Եղնիկի թարգմանութեան մասին, 1) Bonwetsch, „Theol. Litteraturlebt“-ում (1900, № 12), Vetter, „Allg. Litblt.“-ում, (1900, № 17) A. Meillet, „Revue critique“, 1900 № 46, S. Weber „oberrheinisches Pastoralblatt“ (1900 № 24).

Եղնիկի այս յաջող թարգմանութիւնից յետոյ անտա-

րակոյս նորանոր ուսումնասիրութիւններ լցու կտեսնեն եզ-  
նիկի գործի վրայ:

**Ար. Արեդիան.**

Բերլին.

### ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ.

12. Սմբատ Շահաղիզեան. — Մէ քանի խօսք իմ ընթերցողներին, Մոսկուա, 1903. գինը 60 կոպ.
13. Բագրատ Այվազեան. — Աւել յաղթանակ, Թիֆլիս, 1903. գինը 25 կ.
14. Տրիգուալիտի սպեცիալինի դասարանական և առաջարկագիր աշխատավայրեան մասնակին, Լազարևսկայ ակադեմիա, 1903. գինը 1 ռ. 50 կ.
15. Գ. Ղազարեան — Մեզուարութիւն, Վաղարշապատ, 1903. գինը 50 կ.
16. Լ. Ն. Տօլստոյ. — Աստուծուն թէ մամոնային, Թարգմ. Մամբրէ վարդ. Վաղարշապատ, 1903. գինը 3 կ.
17. Ներսիսեան Հայոց Հոգեոր գպրոցի 1901—1902 ուսումնական տարրուայ տեղեկագիրը, Թիֆլիս, 1903:
18. Լ. Տօլստոյ. — Մարդուս շատ հոգ է հարկաւոր, Թարգմ. Վրթանէո քահանայ Մովսիսեան. Վաղարշապատ, 1903. գինը 5 կոպ:
19. Մեծն Աղեքսանդր, Պատմական հենսագրական տեսութիւն ուսուցապետ ԲԵՆԻԱՄԻՆ ՎԱԼԵՐԻԵՎԻց Ռուսերէնից թարգմանեց Վրթանէո քահանայ Մարդարեան (Վաղարշապատ, 1903, 168 էջ, գինը 50 կ.): Աղեքրի պատմութեան մէջ երեացել են արտասովոր ոյժի, հանճարի տէր մարդիկ որոնք աշխարհին ուսուանեցրել իրենց մտքի ոյժով, իրենց գործած գործերով: Այդպիսի անհամները վճռել են մի և երբեմն շատ աղեքրի վիճակը ընդհանուր պատմութեան ընթացքի մէջ արմատական յեղաշբթումն, գալագլուխ ստեղծել: Երկար գարեր արևելքը իւր ձեռին ունէր քաղաքակրթութեան ջահը, Բաքեւոն, Ասորիք,